

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ - 2022թ.

**Հարցաթերթ**

(տևողությունը՝ 150 րոպե)

(զննահատման քայլը՝ 0.25 միավոր)

9-րդ դասարան

1. Որտե՞ղ է երկրակեղևի շերտն ավելի հզոր **0.5 միավոր**
- ա) Թառ անապատ գ) Հայկական լեռնաշխարհ  
բ) Չինական հարթավայր դ) Մեքսիկական ծոցի հատակ
2. Թվարկել միայն մեկ պետության հետ ցամաքային սահմաններ ունեցող չորս երկիր **1.0 միավոր**
3. Ընտրել ճիշտ պնդումը **0.5 միավոր**
- ա) Եվրոպան հայտնի է պարկավոր կենդանատեսակներով  
բ) Ասիայի հարավում տարածված են սևահողերը  
գ) Պամիրը ամենաբարձր լեռնաշխարհն է  
դ) Պատագոնիան խոնավ սարահարթ է
4. Գտնել համապատասխանություն սյունակների միջև **1.0 միավոր**
- |                   |                   |
|-------------------|-------------------|
| Ավաչինսկայա սոպկա | Ռոսի կղզի         |
| Հեկլա             | Կամչատկա թերակղզի |
| Մաունա Կեա        | Իսլանդիա կղզի     |
| Էրեբուս           | Հավայան կղզիներ   |
5. Ո՞ր բնութագիրն է համապատասխանում մշտականաչ կոշտատերև անտառների և թփուտների զոնային (միջերկրածովյան տիպ) **0.5 միավոր**
- ա) ամառը՝ չոր և շոգ, ձմեռը՝ մեղմ և խոնավ  
բ) ամառը՝ չոր և շոգ, ձմեռը՝ ցուրտ և խոնավ  
գ) ամառը՝ տաք և խոնավ, ձմեռը՝ ցուրտ և խոնավ  
դ) ամառը՝ խոնավ և տաք, ձմեռը՝ պարզկա սառնամանիքային եղանակ

6. Շարքից ընտրել այն երկու երկրները, որտեղ կարող են տեղի ունենալ ավերիչ երկրաշարժեր 0.5 միավոր

Լիբերիա, Պակիստան, Շվեդիա, Բելառուս, Էկվադոր, Նիգեր, Էստոնիա, Ուրուգվայ

7. Կազմել համապատասխան գույգեր 1.0 միավոր

Ջրաէներգետիկ ռեսուրսներ, այրվող վառելիք, միջուկային վառելիք, այլընտրանքային էներգիայի աղբյուր, Նորվեգիա, Իսլանդիա, Հարավային Կորեա, Ռումինիա

8. Լեռնային համակարգ, որը հանդես է գալիս Ղազախստանում, Մոնղոլիայում, Ղրղստանում: 0.5 միավոր

ա) Պամիր, բ) Ալթայ, գ) Տյան-Շան, դ) Սայաններ

9. Շիկոտան + Ուռուպ + Իտուռուպ + Կունաշիր + Պարամուշիր = ... (կղզեխումբ) 0.5 միավոր

10. ՀԱՀ-ում բնակվող ժողովուրդ են. 0.5 միավոր

ա) ֆուլբեները, բ) սվազիները, գ) բուրերը, դ) մզիբիները

11. Ինչո՞վ է պայմանավորված կարմրադեղնավուն (ֆերալիտային) հողատիպի գույնը, հումուսի սակավությունը և ի՞նչ պայմաններում է գոյանում: 1.0 միավոր

12. Հաշվել հասարակածի վրա գտնվող կետերի օրական պտույտի արագությունը 1 վրկ-ում: 1.0 միավոր

13. Կողմնորոշվել և լրացնել 1.0 միավոր

Սևիլյա-Իսպանիա, Լիոն-Ֆրանսիա, Մոնրեալ-....., Քեյփթաուն-.....,  
Կասաբլանկա-....., Յոկոհամա-.....:

14. Երկրագնդի Բարեխառն ջերմային գոտիները գտնվում են. 0.5 միավոր

ա) հս. լ. 23° 30' և հվ. լ. 23° 30' զուգահեռականների միջև  
բ) հս. լ. 23° 30' ու հս. լ. 66° 30' և հվ. լ. նույն աստիճանների զուգահեռականների միջև  
գ) հս. լ. 66° 30' ու 90° զուգահեռականների միջև  
դ) հվ. լ. 0° ու 23° 30' զուգահեռականների միջև

15. Դելտա, էստուար 2.0 միավոր

ա) բացատրել յուրաքանչյուր հասկացության իմաստը 1.0 միավոր

բ) բերել 2-ական գետի օրինակ, որոնք ունեն դելտա և էստուար տիպի գետաբերաններ:

1.0 միավոր

## 16. Բացատրել գծապատկերը

### 1.0 միավոր



	Հունվարի միջին	Հուլիսի միջին	Տարեկան տեղումների քանակ (մմ)
Կոպենհագեն	2 °C	16 °C	800
Ռիզա	-2 °C	17 °C	700
Մոսկվա	-11 °C	19 °C	600
Չեյլաբինսկ	-19 °C	21 °C	500
Նովոսիբիրսկ	-21 °C	22 °C	450

## 17. Բացատրել նկարները

### 3.0 միավոր



ա) Ռելիեֆի ի՞նչ ձևեր են պատկերված նկարներում

1.0 միավոր

բ) բացատրել ռելիեֆի յուրաքանչյուր տեսակը

2.0 միավոր

**18. Խնդիր**

2.0 միավոր

Լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 330 մմ է, իսկ օդի ջերմաստիճանը՝  $-3^{\circ}\text{C}$ : Ստորոտին, որն ունի 800 մ բացարձակ բարձրություն, ճնշումը 680 մմ է: Որոշել լեռան բացարձակ բարձրությունը և օդի ջերմաստիճանը լեռան ստորոտին:

19. Նշել քարտեզի վրա թվերով նշված օբյեկտների անունները.

2.0 միավոր

1. Լեռնաշղթա, 2. Գագաթ, 3. Հրաբուխ, 4. Լիճ, 5. Անապատ, 6. Պետություն, 7. մայրաքաղաք,

8. կղզի

